

սիրելի թոյլ առբ քեզ յիշեցնեմ որ դու
 օտար ես աւետարանից և որ դու այդ հէնց
 իւր տարօրինակութեան պատճառով կարող
 ես դատապարտել որովհետեւ պարզ է որ
 այդ բանում շատերն են մոլորուել: Հրեա-
 ները որոնք Փրկչի ժամանակ էին ապրում
 լսեցին եղած քարոզիչներէից ամենամեծին,
 սակայն նրանք չհասկացան նրան: Դրա
 պատճառը քարոզի մթութիւնը չէր որով-
 հետեւ պեռեաւ ոչ մի մարդ այնպէս չէր խօ-
 սել ինչպէս սա ըստ էլի սխալ հասկացան
 նրանք ամենայն ինչ որ նա ասում էր: Դրան-
 ցից մի քանիսը հանձարեղ մարդիկ էին և
 լաւ կրթուած: Մանաւանդ մէկը կար որ
 գլխաւորներէիցն էր մի ուսեալ գիտնական
 հրէից մէջ—նա էլ այդ բաները չհասկա-
 ցաւ և երբ Փրկչը նրան ասաց պու-
 տի նորից ծնուէք, այդ խօսքը բառացի
 հասկացաւ նա չկարողացաւ այն խորհր-
 դաւոր փոխակերպութիւնն հասկանալ որ
 Փրկչը կամենում էր նկարագրել: Արդ ե-
 թէ նիկողիմոսը և նրա նման շատերը չգի-
 տէին այդ հնարաւոր չէ, արդեօք որ դու
 էլ այդ խորհուրդն ըմբռնած չլինիս և մինչև
 այժմ այդ խորհրդին չտիրացած: Թերևս դու
 մի շատ ուսեալ և առանձին ձիրքերի և
 տաղանդների տէր մարդ ես: Արեւցեալը իմ
 եթէ կան այնպիսիք որոնք աւետարանի
 ճշմարիտ իմաստը չհասկանալու վտանգի
 մէջ են, դրանք հէնց այնպիսիքն են, ինչ-
 պէս դու ինքզ: Տարօրինակ է կասես դու
 որ ես այս նկատողութիւնն անում եմ: սակայն
 դա հիմնուած է իրողութիւնների վրայ: Այս
 աշխարհի գիտուններից շատերը չեն որ Քր-
 իստոսիցն են ուսանում: ... Ահ, ճշմարիտ
 էր ս. Օգոստինոսի նկատողութիւնը որ աս-
 ում էր. մինչդեռ գիտունները խարխա-
 փում են մղուկը (դրան բանելու տեղը)
 գանկելու պարզամիտներն ու աղքատները
 մտել էին արդէն արքայութիւն: Արտի պար-
 զութիւնն աւելի է օգնում աւետարանն հաս-
 կանալու, քան թէ մտքի կրթութիւնը: Ու-
 սանելու պատրաստ լինելն աւելի լաւ ունա-

կութիւն է, քան թէ ուսուցանել կարողանա-
 լը: Քո աստուածաբանութեան վարդապետի
 աստիճանը խոչընդոտն կը լինի քեզ աստ-
 ուածաբանութիւնը հասկանալու և դասա-
 կան գիտնականութեան աստիճանը, որ ձեռք
 ես բերել, աւելի կը դժուարացնէ այն հաս-
 կանալու ինչ որ խեղճին մէկը, թէպէտ և
 տգիտութեան մէջ թաղուած, բերան գի-
 տէ: Արովհետեւ այս այսպէս է, ուստի ես
 քեզ չեմ նախատում ո՛վ սիրեցեալդ իմ երբ
 ասում եմ որ դուցէ ցարդ աւետարանի
 վերաբերութեամբ մոլորութեան մէջ ես ե-
 ղելի և որ դու այս պատճառով, եթէ երբ և
 է քեզ այդ ասուի լաւ կ'անես որ նրան
 արժանի ունկնդրութիւն ցոյց տաս և չը-
 խոտես այն պատճառով, որ քեզ նորանշան
 է թուում:

Յարգմ. գերմ. Ծ. Բ.



ՆՇԽԱՐԿԻՒՄ ԸՄԵՆԱԼԻՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
 ՀԱՅՐԵՐԻ ԳԻՒՒԱԾՆԵՐԻՑ:

Արարատի անցեալ համարի հետ հրատարա-
 կած յաւելուածի մասին խօսելով մենք առանձին
 ուշադրութիւն հրաւիրեցինք Հիպոպոլիտին ընծայ-
 ուած վկայութիւնների վերայ: Ստորև յառաջ ենք
 բերում և մանր հատուածներ նոյն Հիպոպոլիտի
 անուամբ որոնք հայերէն առաջին անգամ են լոյս
 տեսնում: Իսկ թէ արդեօք նաքա համապատասխան
 են ընագրի լեզուով կամ ուրիշ մի թարգմանու-
 թեամբ մինչև այժմ եղած որ և է հրատարակութեան
 այդ որոշելու համար պահասում են մեզ աղբիւրներ:
 Հիպոպոլիտ առաքելական ամենանշանաւոր
 հայրերից մէկի՝ ս. Իրենէոսի (մեր ձեռագրների և
 տօնացոյցի մէջ Իրանոս հետեոյ առաքելոց) աշա-
 կերտն էր և իբրև երէց, Հռոմում Գ. դարի սկզբին
 անցաւ մի կուսակցութեան գլուխ, որ Զեփիլիսն
 (199 թ.—217 թ.) և Վալլիստ (217—222) պա-
 պերի հակառակ պահանջում էր խիստ վարուել
 քրիստոնէութիւնն ուրացողների և ծանր մեղքերի,
 յատկապէս անառակութեան մէջ ընկնողների հետ,
 բանագրելով նոցա և ոչ մի պայմանի ներքոյ կրկին
 եկեղեցւոյ գիրկը չընդունելով: Այս վէճը, որ ե-
 կեղեցւոյ ուրիշ մասերի մէջ ևս յարուցուել է և
 Գ. դարու գլխաւոր աղանդների պատճառ եղել:

Հոռոմե՛մ այս ժամանակ այնքան զօրացաւ, որ Հիպպողիա իւր կուսակիցներէ կողմից հակաթոռ կախկոպոս ընտրուեցաւ: Բայց երբ նա 235 թ. Մարտինոս Թրակացի կայսեր հանած հայածանքի ժամանակ Հոռոմի իսկական կախկոպոս Պոնտիանոսի հետ միատեղ Սարդիւնիա քրտրուեցաւ և կիբեց այնտեղ իւր կեանքը: ըստ աւանդութեան երկուսի նշխարներն էլ Հոռոմ՝ բերին և միասին թաղեցին՝ երկուսին ևս սրբոց կարգը դասելով: 1551 թ.-ին նոցա վիպարանի տեղում գանուեցաւ մի արձան, որ ներկայացնում է Հիպպողիոսին՝ կախկոպոսական օթոռի վերայ նստած, իսկ օթոռի ետեմն արձանադրուած են բոլոր նորա գրուածների անունները: Ինչպէս նաև 16 տարուայ համար կազմած զատկական տօմարը: Այս գրուածներից, որոնց բազմութեամբ և ճօնութեամբ Հիպպողիա իւր ժամանակակից Արոգինէսի * հետ կարող էր համեմատուել, մեզ սակաւ մնացորդներ են միայն հասել: Սոցա մէջ նշանաւորներն են լատին գրուածքը, մեկնարանական ծանօթութիւններ Գանիէլի մարգարէութեան մասին (երկուսից ևս հայերէն հատուածներ կան, թէև կասկածելի վաւերականութեամբ): Չատագոգութիւն Նոյնտ աղանդաւորի դէմ: մանաւանդ Philosophumena կոչուած գործը, որ զանազան աղանդների դէմ է ուղղուած և առաջ Արոգինէսի աշխատութիւն էր համարուում: բայց վերջերս ստուգուեցաւ Հիպպողիոսին լինելը: Մեր հատուածները կարող են այս վերջին հեղինակութիւնների մէկն ու մէկից առնուած լինել: յամենայն դէպս, եթէ նորա վաւերական են՝ պէտք է կապ ունենան անշուշտ մի ինչորի հետ, որ շատ է զբաղեցրել Հիպպողիոսին:

Բ. Գարում զեւ ս. երրորդութեան գաղափարը քրիստոնէական հանգանակների մէջ արտայայտուում էր գրեթէ նոյն բառերով, ինչպէս աւանդել է այն ինքը Փրկիչը իւր աշակերտներից բաժանուելիս (Մատթ. ԻԷ. 19): Այդ գարու վերջերին յայտնուող Միլանի աղանդաւորներն և զան գլխաւոր պատճառը, որ այդ գաղափարը նորանոր բացատրութիւններ ընդունելով հետզհետէ այնպիսի ձեւակերպութիւն ստացաւ, ինչպիսին տեսնում ենք Նիկիական հանգանակի մէջ: Միլանականների ընդհանուր ձգտումն էր ոչ մի բաժանումն թող չտալ ստուածային միութեան մէջ: բայց իրենց տարբեր հայեացքներով նորա երկու ճիւղերի են բաժանուում: Առաջինի հեղինակն է Թէոդոտոս խաղասորդը, որ ինչպէս Երեսնական հասարակ

մարդ էր համարում, մկրտութեան ժամանակ ասուածային զօրութեամբ օծուած, ուստի և հրաժարուում էր նորան Աստուած անուանելուց: Ինննական թուականներին Հոռոմ գալով նա բանագրուեցաւ Ալիտոր կախկոպոսից, բայց բազմութիւ հետևողներ ունէր, մանաւանդ գիտնականներից, որոնց վերջինը (մօտ 230—240 թ.-ներին) հերձուածների պատմութեան մէջ առնելից յայտնին՝ Արտեման է:—Հիպպողիա գործ է ունեցել աւելի միւս ուղղութեան հետ, որ և հարաւոր էր ազանդ է կոչուում և որի առաջին ներկայացուցիչն էր Փոքր Ասիացի (ըստ աւանդութեան Չմիււնացի) Նոյնտը: Նորա երկու աշակերտները՝ Կաի գոնոս և Ալեոմիւնէս, Չեփիւրին պապի օրով Հոռոմի կան և նորան, ինչպէս առաւել նորա յաջորդ Կալլիստին, իրենց կողմը ձգելով համայնքի մեծ մասի մէջ տարածեցին իրենց ուսումը: Այդ ուսման համաձայն Հայր Աստուած ինքն է, որ իրրե Գրիստոս յայտնուել, ծնուել և շարչարուել է՝ նոյնն անտեսանելի և յայտնաւ, անձին և ծնեալ, անշարչար և շարչարեալ, այնպէս որ Յովհաննէս աւետարանչի Բն՝ մասին ասածները իրրե պատկերաւոր խօսքեր պէտք է միայն ընդունել: Մօտ 215 թ. ին Հոռոմե՛մ այս ուղղութեան պարազուի եղաւ Սարէլ, ըստ աւանդութեան Լիբիացի, որի անունը պատմութեան մէջ մնացել է իրրե այս ազանդի իսկական ներկայացուցչի: Իւր նախորդների ուսման վերայ նա միայն այն կէտն է աւելացրել, որ ս. Հոգին ևս ո՛չ առանձին անձն, այլ նոյն Աստուծոյ մի քնն է համարուում այստեղ: միևնոյն Աստուածը Հօր դիմօք գործել է իրրե Արարիչ և Օրէնստու: Արդու դիմօք իրրե Փրկիչ, Համարածուցից յետոյ իրրե ս. Հոգի:—Հիպպողիա սոցա բոլորի դէմ էլ գրուածներ ունի ուղղած, որոնց մասունքը կարող են լինել և ներկայ հատուածները, ինչպէս և վերջինի մէջ յիշուում է Սարէլի անունը: Կասկածելի են այստեղ գուցէ ս. երրորդութեան անձերից իւրաքանչիւրին տուած որոշակի մակդիրները առաջին հատուածի մէջ (ծնօղ, ծնօնօղ, ելօղ): որոնք աւելի ուշ են ընդհանրացել եկեղեցւոյ մէջ: բայց քանի որ Հիպպողիոսի ժամանակակից Տերտուլիան ևս գրեթէ նոյն բառերը գործ է ածում: մենք առանձին մի պատճառ չենք գրտնում նոցա անվաւերական համարելու: ընդհակառակն թերևս կարևոր վիպարութիւններ են նորա Հիպպողիոսի ընդունած քրիստոսարանութիւնը պարզելու համար:

Այս հատուածներն առնուած են Մայր Աթոռի նոյն հ. 95 ձեռագրից (էջ 20), որից և Արարատի նախորդ համարի հետ հրատարակած յա-

* Մինք ևը հրատարակենք շուտով նոր: անձանօթ հատուածներ նաև Արոգինէսից:

ւելուածը, նորա մէջ են բերուում իբրև Բան Է. և Բան Ը. մի քաղուածքի, որի ընդհանուր վերնագիրն է. Սրբոյ Գրէիչոյն Էւոյոյ Լուսաւորչին Բան Կառուոյ, և նորին նախնայն. նախորդ հասուածներից առաջին երկուսը ընծայուում են Լուսաւորչին, Գ.ը սրբոյ Կառուոյ, Գ.ը Գրէիչոյն Էւոյոյ, Ե.ը և Զ.ը երկուսն Սրբոյ Կառուոյ, Թողնելով այդ բոլորը իբրև աւելի ուշ ժամանակի գործ և ուրիշ ուսումնասիրութեան առարկայ, մենք մէջ կը բերենք յաջորդ հասուածը, որի հեղինակն է Արարատի անցեալ տարուայ (հ. 4. և 9.) ընթերցողներին ծանօթ Գրիգոր Աբանչեղագործը, որի յունարէն բնագիրը ու ասորական թարգմանութիւնը թէև յայտնի են, բայց հայերէն թարգմանութիւնը յիշուած է միայն Զ.ը նախնայն Էւոյոյն Լուսաւորչին Էւոյոյ կը. 378. և գեղ լոյս չէ տեսել, Արգարև «այս է հրաշակաւոր հանգանակն սրբոյն» և դաւանանքների պատմութեան մէջ իւր պատուաւոր տեղն ունենալով՝ կարող է գուցէ նաև մեր հանրամակի ուսումնասիրութեան համար իբրև օժանդակիչ միջոց ծառայել, Աւելորդ չենք համարում կցել նաև Գամաստին ընծայուած կտորը, որ իբրև Բան Կառուոյ Գրիգոր նիւսացու անուամբ հետևող վկայութիւնից յետոյ է գալիս, Գամաստ Լուսի եպիսկոպոս ընտրուեցաւ 366 թ. ին մի կուսակցութեան կողմից, մինչդեռ միւս կուսակցութեան ընտրելին էր Աւրսինոս սարկաւազը:

Այստեղից որիննահեղ կոխ յառաջ եկաւ Լուսի փողոցներում երկու կուսակցութիւնների մէջ, որ և առիթ եղաւ մի երկարատե հերձուածի, Գամաստ յաղթող ելնելով վարեց քահանայապետութիւնը մինչև 384 թ. և 368 թ. ու 370 թ. ի Լուսի ժողովներում ինչպէս նաև 381 թ. ի 4. Պուսի արեղ. ժողովում Արիստականների դէմ ուղղափառութեան պաշտպան հանդիսանալով՝ սրբերի կարգը դասուեցաւ, նա առանձին հոգս է քաշել Լուսի կառուածները պաշտպանելու և զարգարելու համար և շարագրել է շատ գերեզմանների տապանադրեր, նորա գրուածները (մեծ մասամբ թղթեր և ոտանաւորներ) Յ անգամ լոյս են տեսել, բայց մեր գրականութեան մէջ առաջին անգամ ենք գտնում նորա անուան յիշատակութիւնը, Անշուշտ այս կտորն առնուած է արիստական վէճերի հետ կապ ունեցող և գուցէ մեր մէջ նոյնպէս աւելի ընդարձակ ձևով յայտնի մի դաւանարանական գրութիւնից, բայց մենք միջոց չունեցանք նորա աղբիւրը որոշելու:

Բան Է. Հիպոդիտեա Բաստրացոյ, Չի միութիւն սրբոյ երրորդութեանն՝ այն ի զօրութեանցն յայտ է. Ի սկզբանէ արար Աստուած Հայր զերկինս և զերկիր և բանիւ Տեառն երկինք հաստատեցան՝ Սրբոյն և հոգով բերանոյ նորա Սրբոյն Էւոյոյն ամենայն զօրութիւնք նորա, Բայց զի պայման գոյութեան այլ և այլ է՝ և այն չէ ծածկեալ յիմաստնոց, այնու զի հայր չէ ծնեալ և ծնող է և որդի չէ ծնող և ծնունդ է և հոգին ոչ ծնող է և ոչ ծնունդ այլ ելող. ըստ այնմ եթէ Հոգին ճշմարտութեան որ ի Հօրէ ելանէ, եւ ոչ ասի եղբայր Արդոյ, քանզի չէ ծնունդ և ոչ օտար յԱստուծոյ, քանզի ի Հօրէ ելանէ որպէս և ոչ եւայ և Հարէլ եղբարք ասին միմեանց, թէպէտ և երկօքինն յԱղամայ են:

Այլուստ, Ը. Ըստ նմին օրինակի թէպէտ և յԱստուծոյ են Արդի և Հոգի, ոչ ասին եղբարք միմեանց, զի յայտնի են միմեանց պայմանք իւրաքանչիւր գոյութեանցն ի միոջէ էութենէ Հօր:

Նորին. Այ վասն անձին ինչ միայնոյ դաստուածութիւնն ասէր՝ թէ ես եմ Աստուած և այլ ոք չիք, այլ վասն անջրպետ և խորոց ի մէջ իւր և շատուածոցն արկանելոյ, Բայց զի Արդոյ և Հոգւոյ աստուածութիւնն և ի հոռումն ճառէր, յայտ այն էր զոր ասէր. Արասցուք մտրդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան, և դարձեալ թէ Ըստ պատկերի Աստուծոյ արար զնա Աստուած, և դարձեալ թէ Եկաք իջցուք և խառնակեցուք զեղուս նոցա և դարձեալ թէ Տեղաց Տէր ի Տեառնէ հօր և ծծումք յերկինց ի վերայ Սոգոմայ և դարձեալ ես եմ Աստուած Արրահամու և Աստուած Սահակայ և Աստուած Յակովբայ, եւ Եսայի ասէ. Տէր Աստուած առաքեաց զիս և հոգի նորա, Բաղում և այլ այսպիսի գտանմք յօրէնս և ի մարդարէս:

Նորին ի նոյն. Չի Հայր Աստուած կատարեալ է և Արդի Աստուած բաւանդակ և Հոգին Սուրբ Աստուած բաւական է. այսպէս գրեալ իսկ է յօրէնս և ի մարդարէս և ի նոր կտակարանս, Բայց եթէ ընդէր երեք աստուածք շատացին այլ մի աստուածութիւն, ինչգրելի է, Զասին երեք աստուածք, քանզի ոչ եթէ այլևայլութիւն է. շասի դարձեալ միութիւն, զի մի ի հրեական և Սարէլի միտան անկանիցիմք, Հաւատամք յերեքանձնեայ երրորդութիւնն և չասեմք երկու աստուածք, զի ամի հեթանոսարար բաղմաստուածք լինիցիմք:

Գրիգորի Աբանչեղաւ գործի Թ. Կի է Աստուած Հայր կենդանի բանին, էակն իմաստութեան և զօրութիւն կերպարանին իւրոյ:

կատարեալ կատարելոյն ծնող, Հայր Արդոյ միածնի և մի տէր միայնոյ. Աստուած յԱստուծոյ, կերպարան և պատկեր աստուածութեանն, բան գործաւոր, իմաստութիւն պարառական, ամենեցուն ընդ լինելութեամբ անկեղոցս և զօրութիւն, բոլոր էիցս արարող. Արդի ճշմարիտ՝ ճշմարտին, անապական՝ անապականին, անմահ՝ անմահին, մշտնջենաւոր՝ մշտնջենաւորին մի Հոգի Սուրբ Աստուծոյ զէութիւնն ունելով և Արդոյն երեւեալ մարդկան յայտնապէս կատարեալ՝ կատարելոյ պատճառ կենդանեաց, սրբութեան շնորհօլ, որով ծանուցանի Հայր, որ ի վերայ ամենեցուն և յամենեօսին և Արդի Աստուծոյ, որով ամենայնք, Երրորդութիւն կատարեալ փառօք և մշտնջենաւորութեամբ և թաղաւորութեամբ, անբաժանելի անօտարելի ոչ ըստեղծական ինչ և ոչ ծառայական ինչ յերրորդութեանն կամ ի ներքս ածական, որպէս թէ յառաջագոյն չէր՝ զկնի ի ներքս ածաւ. զի ոչ երբէք նուազեաց Արդի ի Հօրէ և ոչ ի Հօրէ և յԱրդոյ Հոգին Սուրբ, այլ անփոփոխելի, անայլայլելի երրորդութիւնն միշտ:

Դ ա մ ա ս ու շ ա ո մ ա յ . Ժ Ա .

Այսպէս հաւատամք և խոստովանիմք ի հայր և յԱրդին և ի Հոգին Սուրբ՝ Երրորդութիւն անբաժանելի սկիզբն և զազարումն նուազ և առաւել ոչ ունի. հոգի է Աստուած և խոստովանիմ զերիսն ի միութիւն և զմին յերրորդութեանն. Հայր անծին է և ծնող զԱրդի. Արդի ծնունդ և անծին, Հոգի եւլօղ և զազարումն ի Հօրէ առ Արդի, անեղբ երեք անձնաւորութիւնք և մի բնութիւն:

Կ . Վ .



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱԹՈՒՆԻԿ ԵՆԾՂԵՑԻ

— Հոռովից բաժանուած եկեղեցիներ ի կրկին միութեան գործը Աւետ ԺԿ. իւր քահանայապետութեան կէտնպատակին և գործերէլ, Հոռովում պապը կաղմել է մի պաշտօնական յանձնախումբ 8 ծիրանաւորներից և եպիսկոպոսներից. այդ «սուրբ յանձնախումբ» նախագահն ինքը պապն է. Բնչպէս սովորութիւն է այդպիսի յանձնախումբերի անդամներին պապը նշանակում է և գիտական խորհրդականներ, որոնք պէտք է բոլոր խնդիրները մշակեն:

— Հոռովի աթոռի տարեցուցից տեղեկանում ենք մի քանի հետաքրքրական փաստերի՝ պապական եկեղեցուն վերաբերեալ. Այժմեան պապը հոռով

մեական քահանայապետների շարքում 263-երորդն է. Պապի խորհրդարանն (Collegium) այժմ 62 անդամ ունի (փոխանակ 70-ի). Կարգինալներից ամենից ծերն է Մարտէզը, որ 90 տարեկան է, որից յետոյ երկրորդ է կարդինալ Կանոսսան 87 տարեկան, իսկ պապը զբանցից յետոյ երրորդն է իւր հասակով (86 տարեկան): Բացի 62 ծիրանաւորներից պապական եկեղեցին ունի 10 պատրիարքութիւններ, 815 արքեպիսկոպոսութիւն և եպիսկոպոսութիւն արեմուտքում և արեւելքում և 343 եպիսկոպոսութիւնք և արքեպիսկոպոսութիւն ի բաժինս հեթանոսաց (in partibus infidelium): Այժմեան պապը հիմնել է 203 առաջնորդութիւն, փոխանորդութիւն և առաքելական նուիրակութիւններ:

— Աւինիոնի այն պալատն ուր ապրում էին հակաթոռութեան միջոցին պապերը, առաջարկուած է Աւետ ԺԿ-ին ի պարգև, սակայն պապն ամենեին չի մտածում հեռանալ Վատիկանից:

— Փրանսիայում երրորդ հասարակապետութեան կռիւք եկեղեցու հետ վերջ չունի. հէնց որ կառավարութեան զեկն ընկնում է արմատականների ձեռքը, անմիջապէս արշաւանքն սկսում է Հոռով մի ընդդէմ:

Բուրժուայի նախարարութիւնը զուտ արմատական լինելով հանդերձ չափաւորութիւն է ցոյց տալիս ամենայն խնդիրներում, բայց եկեղեցու վերաբերութեամբ չէ կամենում ոչ մի զիջողութիւն անել. Սկսած 1878 թուականից մինչև այսօր հոգեւոր վարչութեան նախահաշուից տարեկան 8 միլիոն ֆրանկ պահասացրած է, Կառավարութեան կառուցու միջոցներից մեկն էլ այդ է, որ կարծելով կեկեղեցականների ոռժիկները, խեղճացնէ նրանց, այս նպատակով է ահա, որ 53 /, միլիոն ֆրանկի ծախքն այսօր դարձել է 45 միլ. կրճատման է ենթարկուել մանաւանդ եկեղեցականների ոռժիկը, որից պակեցրած է 2,742,495 ֆրանկ, Ցաւալին այն է, եկեղեցիներ շինութեան, նորոգութեան և պահպանութեան նախահաշուն էլ կրճատուած է, մինչդեռ այդ գումարն առաջ 3,150,000 ֆրանկ էր, այս տարի նշանակուած է 1,800,000 ֆր., Կաթոլիկ միսիոնի համար այս տարի նշանակուած է 665,000 ֆր. որ դործ է գրուում ոչ միայն ֆրանսիական օտարերկրեայ եկեղեցիների համար, այլ զբանց օժանդակութիւն են ստանում արեւելեան Հոռովի հետ միացած եկեղեցիք, ինչպէս ասորական, հայկական, քաղզէական, զպոնների և բոլղարների կաթոլիկ եկեղեցականները. Այս ծախքերը կառավարութիւնը չէ կրճատում, որովհետև զրա նշանակութիւնն է ֆրանսիական քաղաքական